ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

ք. Երևան «05» սեպտեմբերի 2022թ.

ՀՐԱՄԱՆ № 11-Ա[1]

ԱՐՄԻՆԵ ԲԱԳՐԱՏԻ ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԲԱԺՆԻ ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐՈՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՉԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՈՒՄ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 16-րդ մասով, 16-րդ հոդվածի 4-րդ մասով, 17-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, Հայաստանի Հանրապետության առաջին փոխվարչապետի 2018 թվականի դեկտեմբերի 12-ի «Քաղաքացիական ծառայողի փորձաշրջանի հետ կապված առանձնահատկությունները սահմանելու մասին» N 441-Ն որոշման հավելվածի 2-րդ, 7-րդ, 8-րդ և 14-րդ կետերով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության գիտության կոմիտեի անձնակազմի կառավարման բաժնի բարեվարքության հարցերով կազմակերպչի (ծածկագիր՝ 18-1-28.3-Մ3-1) թափուր պաշտոնն զբաղեցնելու համար հարցազրույց անցկացնող հանձնաժողովի եզրակացությունը և Արմինե Մաթևոսյանի անձնական դիմումը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ.

1. Արմինե Բագրատի Մաթևոսյանին 2022 թվականի սեպտեմբերի 6-ից ինն ամիս փորձաշրջանով նշանակել Հայաստանի Հանրապետության գիտության կոմիտեի անձնակազմի կառավարման բաժնի բարեվարքության հարցերով կազմակերպչի (ծածկագիր՝ 18-1-28.3-Մ3-1) քաղաքացիական ծառայության թափուր պաշտոնում:

2. Ա. Մաթևոսյանի փորձաշրջանի համակարգող նշանակել Հայաստանի Հանրապետության գիտության կոմիտեի քարտուղարության պետ Յուրի Պետրոսյանին:

3. Ա. Մաթևոսյանի ամսական աշխատավարձի չափը սահմանել «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին համապատասխան:

4. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Invalid signature

X

Լևոն Ֆարմանյան
Գլխավոր քարտուղար
Signed by: FARMANYAN LEVON 3211800638

Լ. ՖԱՐՄԱՆՅԱՆ